

**ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՎԻՃԱՐԿԵԼԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՔԱՐՅԱՆ

Սույն հոդվածը հետևյալ երեք խնդիրների մասին է:

1. Լեզվական գծային միավորները՝ ըստ իրենց գրաված դիրքի, սկզբունքորեն ունեն ոչ թե երեք բնութագրեր՝ առաջադաս, միջադաս, վերջադաս, այլ չորսը: Չորրորդը շրջադաս դիրքն է, երբ բնութագրվող միավորը պարփակում՝ շրջապատում է մեկ այլ միավոր: Շարահյուսական մակարդակում այս դիրքը սովորաբար նույնացվում է միջադաս դիրքի հետ, սակայն հաշվարկման համակարգի¹ անթույլատրելի փոփոխությամբ:

2. Միջանկյալ միավոր համարվող այն միջադաս կառույցները, որոնք առաջադաս դիրքում գլխավոր նախադասություններ են, իրականում այդ նույն արժեքն ունեն և նույն գործառույթն են կատարում ցանկացած դիրքում:

3. *Սակայն, ուրեմն* շաղկապները, որոնք միջադաս (կամ վերջադաս) դիրքում ձևեր են բերում վերաբերականի երանգ, բնավ չեն կորցնում շաղկապի իրենց դերը և չեն ստանում խոսքիմասային տարարժեքություն:

Բանալի բառեր – հարաբերական դիրք, առաջադաս, վերջադաս, միջադաս, շրջադաս, գլխավոր նախադասություն, միջանկյալ միավոր, վերաբերական, շաղկապ, խոսքիմասային տարարժեքություն

1. Շրջադաս դիրքի խնդիրը

Ընդունված է ասել, որ լեզվական որևէ մակարդակի շարակարգում այդ նույն մակարդակի միավորի որևէ բաղադրիչի հարաբերական դիրքը կարող է լինել երեք տեսակի: Շարահյուսության մակարդակի օրինակով (երկրորդական նախադասության և դերբայական դարձվածի առնչությամբ) այդ դիրքերն են.

Ա. Բնութագրվող առմիջուկային միավորը (ստորադաս նախադասությունը, դերբայական դարձվածը) միջուկային միավորի (գերադաս նախադասության, բուն նախադասության) առջևում է. *Երբ տեղ հասանք, ասեն ինչ պարզ դարձավ: Միսպներս խոստովանելուց չեմ վախենում:*

Սա **առաջադաս** դիրքն է:

Բ. Բնութագրվող առմիջուկային միավորը (ստորադաս նախադասությունը, դերբայական դարձվածը) միջուկային միավորի (գերադաս կամ բուն նախադասության) մեջ է. *Քաղաքի բնակիչները, եթե լուրը*

¹ **Հաշվարկման համակարգ** – անփոփոխ դիրքացույցներ, որոնց համեմատ կատարվում են չափումներ, գնահատվում են դիրքերի, ուղղությունների, տարածության ու ժամանակի փոփոխությունները:

բարի էր, ուրախանում էին: Քիչ անց վիրավորը, հավաքելով վերջին ուժերը, ոտքի կանգնեց:

Սա **միջադաս** դիրքն է:

Գ. Բնութագրվող առմիջուկային միավորը (ստորադաս նախադասությունը, դերբայական դարձվածը) միջուկային միավորի (գերադաս կամ բուն նախադասության) վերջում է. *Բոլորը գիտեին, որ դա ճիշտ է: Կցանկանայի գրադվել միայն գեղարվեստով:*

Սա **վերջադաս** դիրքն է:

Շարակարգային միավորի դիրքի հարաբերական բնութագրման դեպքում կարևոր է **շրջելիության (փոխադարձության)** սկզբունքը: Նկատի ունենք այն, որ երբ ասում ենք, օրինակ՝ ստորադաս միավորը գերադասի համեմատ առաջադաս է, դա նշանակում է, որ գերադասն էլ ստորադասի համեմատ վերջադաս է: Կամ՝ երբ ասում ենք՝ ստորադաս միավորը գերադասի համեմատ վերջադաս է, դա նշանակում է, որ գերադասն էլ ստորադասի համեմատ առաջադաս է:

Բայց փոխադարձության սկզբունքը սովորաբար խախտվում է միջադասության դեպքում. ասում ենք՝ ստորադաս միավորը միջադաս է գերադասի համեմատ, բայց չի ասվում, թե այս դեպքում ինչպես է բնութագրվում գերադաս միավորի դիրքը ստորադասի համեմատ: Այդ բնութագիրը սովորաբար անտեսվում է համապատասխան եզրույթի բացակայության պատճառով: Այս իրավիճակը հարկադրում է, հակառակ տրամաբանության, փոխելու հաշվարկման համակարգը և կրկնելու նույն բանը:

Այս անհետևողականությունը վերացնելու նպատակով առաջարկում ենք ներմուծել **չորրորդ դիրքի** գաղափարը և լրացնել եզրույթային բացը:

Դ. Բնութագրվող առմիջուկային միավորը (ստորադաս նախադասությունը, դերբայական դարձվածը) միջուկային միավորի (գերադաս կամ բուն նախադասության) շուրջն է. *Ուկրաինայում, դու հո տեսնում ես՝ ինչ է կատարվում: Միայնակ ես սիրում եմ նստել երեքուն լույսերում: Այդ երկրի համար Մարգարը Թորոսիկից և ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չունեք ընծա տանելու:*

Սա կոչում ենք **շրջադաս** դիրք²:

Այս բոլոր դեպքերում առմիջուկային տարրը դիտարկվում ու բնութագրվում է միջուկային տարրի համեմատ, դրա դիտանկյունից: Բայց կարելի է դիտանկյունը փոխել: Հետևաբար կարող ենք ասել, որ միջադաս երկրորդական նախադասության համեմատությամբ գլխավոր նախադասությունը շրջադաս է:

Այս «շրջադաս» հասկացության ներմուծման շնորհիվ մեզ հաջողվել է 1) հայտնաբերել դերբայական դարձվածի դիրքային նոր շրջադաս տար-

² Դիրքերի մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Ն. Զաքարյան**, Շարադասական դիրքերը և դրանց արժեքները հայերենում, «Ձառուկյանական ընթերցումներ – 2011», Եր., 2011, էջ 114 – 125:

բերակ, 2) վերամեկնաբանել երկրորդական նախադասությանը միջադասված գլխավորի երևույթը, 3) նկարագրել շրջադաս ածանցի երևույթը:

1) Շրջադաս դերբայական դարձվածի օրինակ են վերոհիշյալները.
Միայնակ ես սիրում եմ նստել երեքուն լույսերում: Այդ երկրի համար Մարգարը Թորոսիկից և ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չունեք ընծա տանելու: Համոզվելու համար փոխենք դերբայական դարձվածների դիրքը դարձնելով վերջադաս. **Ես սիրում եմ միայնակ նստել երեքուն լույսերում: Մարգարը Թորոսիկից և ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չունեք ընծա տանելու այդ երկրի համար:**

2) Երկրորդական նախադասությանը միջադասված գլխավորի մասին է սույն հոդվածի երկրորդ մասը (տե՛ս ստորև):

3) Ածանցները³ փաստորեն լինում են՝

1. նախածանց՝ **համա-կարգ,**

2. վերջածանց՝ **խայթ-ոց,**

3.1. միջածանց՝ **հրմշտ-կ-ել, գր-ոտ-ել,**

3.2. ներածանց՝ **դմբլո, պլոկել,**

4. շրջածանց՝ **ստոր-գետն-յա, ան-զգ-ա, վեր-արկ-ու, բաց-առ-իկ, տարա-զն-աց** (ավելանում են նույն քայլում՝ միաժամանակ):

Այս շրջադաս ածանցները (շրջածանցները) փաստորեն նախածանցից ու վերջածանցից կազմված բաղադրյալ ածանցներ են: Կառուցվածքով դրանք հեռադրական գուգադիր ածանցներ են, ինչպես նմանօրինակ շաղկապները (*ոչ թե... այլ, եթե... ապա, ոչ միայն... այլև*), որ երկու բաղադրիչից կազմված մեկ միավոր են: Շրջածանցները ևս երկու բաղադրիչից կազմված մեկ միասնական միավոր են, քանի որ բառակազմական հիմքին ավելանում են նույն քայլում՝ միաժամանակ:

Ի տարբերություն **համաձանցավոր** բառերի (*վերստուգում, անօրինական, մակբայական*), որոնցում նախածանցն ու վերջածանցը հիմքին միանում են տարբեր քայլերում (ոչ միաժամանակ), շրջածանցով կազմությունները պետք է կոչել **շրջածանցավոր** բառեր:

2. Միջադաս գլխավոր նախադասության և միջանկյալ կառույցների տարբերակման խնդիրը

Շրջադաս երկրորդական նախադասության ամենատարածված դեպքը հեղինակի միջադաս խոսք պարունակող ուղղակի մեջբերված խոսքն է:

- *Իմ տղաները, - մեջ ընկավ Լուսիկը, - բանակ գնացել, եկել են:*

«*Չուք, - ասացինք, - էս երկրի տերն եք. քաղաքն էլ է ձերը, գյուղն էլ*»:

Մրանցում գլխավոր նախադասությունը հեղինակի խոսքն է, որն ընդունված է որպես միջադաս բնութագրել մեջբերված խոսքի, այ-

³ Ածանցումը շարահյուսական երևույթ չէ: Սակայն դրան համառոտ անդրադառնում ենք, քանի որ նախ խոսքը բառակազմական միավորների շարադասության մասին է, երկրորդ սա հարմար գուգահեռ է շարահյուսական շրջադաս դիրքի քննարկման տեսակետից:

սինքն՝ երկրորդական նախադասության նկատմամբ: Մակայն փոխադարձության սկզբունքով անանուն է մնում մեջբերված խոսքի, այսինքն՝ երկրորդական նախադասության դիրքը: Ուրեմն շրջելիության սկզբունքը պահպանելու, հետևողական լինելու դեպքում պետք է կարողանանք ասել, որ վերջին օրինակներում առկա է շրջադաս մեջբերված խոսք, այսինքն՝ շրջադաս երկրորդական նախադասություն:

Ինչպես տեսանք, հանդիպում են նաև սովորական բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում առկա է շրջադաս երկրորդական բաղադրիչ նախադասություն: Դրանք մեծ մասամբ շրջուն շարադասության դրսևորումներ են: Բանավոր անկաշկանդ խոսքում դրանք հաճախադեպ են, սակայն գրավոր խոսքում համեմատաբար սակավադեպ են: Գլխավորի նկատմամբ շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասության օրինակներ են

Ամեն ինչ, մեզ այդ ժամանակ թվում էր, լավ է:

Խոսքս, տեսնե՞ք, ուր է գնում քաջ որսկանի գյուլլի պես: (Հ. Թ.)

Իմ ծննդավայրում, արդեն հինգ տարի է, չեմ եղել:

Արցախյան ճակատի մեր զինվորները, ինն ամսից ավելի է, խրամատներից դուրս չեն գալիս:

Այդ տխմարին, մտածում էի, դա էլ քիչ է:

Ընկերներս, կարծում եմ, ինձ մենակ չեն թողնի:

Որոշ հավանական մասնակիցներ, միանգամայն հնարավոր է, շուկա մտնելուց հրաժարվեն պատժից վախենալու պատճառով:

Երգերիս մեջ, դու գիտե՞ս, ինձ ոչ ոք չի ճանաչում: (Ե. Չ.)

Դու գնում ես՝ չգիտեմ ուր... (Վ. Տ.)

Մեր սահմաններում, դու տեսնում ես, չէ՞, ինչ է կատարվում:

Իմ գործերին, ես քեզ զգուշացնում եմ, երբեք չխառնվես:

Քո այդ տարօրինակ խոսքերով, ոչ մի կերպ գլխի չեմ ընկնում, ինչ ես ուզում հասկացնել ինձ:

Հակառակ հայեցակետից դիտված՝ սրանցում առկա են միջադաս գլխավորով նախադասություններ:

Այսպիսի նախադասությունները, սակայն, լեզվաբանական գրականության մեջ կա՛մ չեն քննարկվում⁴, կա՛մ համարվում են նախադասություններ, որոնց մեջ առկա է միջանկյալ նախադասություն: Եվ ընդ-

⁴ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն), Եր., 1987: Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Եր., 1986: Մ. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976: Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազոյան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975: Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987: Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն (դպրոցական դասագիրք), Եր., 1976: Վ. Ավագյան, Հայոց լեզվի շարահյուսություն (դպրոցական դասագիրք), Եր., 1985: Լ. Եզնկյան, Հայոց լեզու, Եր., 2005: Ա. Պապոսյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2003: Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Եր., 1976: Մ. Աբրահամյան, Հայոց լեզու (շարահյուսություն) (բուհական ձեռնարկ), Եր., 2004: Մ. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Եր., 1975:

հանրապես հաճախ որպես միջանկյալ է դիտարկվում հենց երկրորդականին միջադասված գլխավոր նախադասությունը: Պատճառն այն է, որ լռելյայն ընդունված է այն թյուր կարծիքը, թե գլխավոր նախադասությունը միջադաս (իսկ երկրորդականը՝ շրջադաս) լինել չի կարող, ուստի նման դեպքերը մտցվում են պրոկրուստյան մահիճի մեջ և մեկնաբանվում որպես այլ ավելի ծանոթ ու սովորական երևույթ, մասնավորապես՝ միջանկյալ կառույց:

Համառոտ անդրադառնանք այս կարգի մեկնաբանություններին:

Ս. Աբրահամյանը «Հայոց լեզու (շարահյուսություն)» դպրոցական դասագրքում (Եր., 1998)՝ «Միջանկյալ նախադասություն» վերնագրի ներքո, ներդրյալ կառույցների հետ խառը ներկայացրել է նաև շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ, օրինակ՝ «Սակայն պատմական այդ հանգամանքը, **կարծում ենք**, այնքան էլ կարևոր չէ» (էջ 257): Այսինքն՝ շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասությունները փաստորեն համարված են միջանկյալ կառույցներով պարզ նախադասություններ:

Գրեթե նույնն է պատկերը Ֆ. Խլղաթյանի դասագրքում⁵:

Մեկ այլ առիթով Ս. Աբրահամյանը, տարբերակելով միջանկյալ և ներդրյալ նախադասությունները, նշել է. «Նախադասության միջանկյալության աստիճանը տարբեր է լինում: Կան միջանկյալ նախադասություններ, որոնք միայն այդպես միայն միջանկյալ կարող էին գործածվել, և, ընդհակառակն, կան այնպիսիները, որոնք հեշտությամբ կարող են փոխել իրենց այդ բաժանվածությունը ու քերականորեն կապվել հիմնական նախադասության հետ»⁶: Որպես կապի սերտացման միջոցներ՝ հեղինակը դիտարկել է կետադրության փոփոխությունը և/կամ շաղկապի հավելումը (էջ 438-439): Նույն տեղում նշված է նաև, որ կան այնպիսի միջանկյալ նախադասություններ, որոնք առանց որևէ փոփոխության կարող են մեկնաբանվել որպես գլխավոր նախադասություններ (էջ 139):

Վ. Առաքելյանը «Հայերենի շարահյուսություն» գրքում (հ. 2, Եր., 1964), տարբերակելով ներդրյալ և միջանկյալ նախադասությունները՝ որպես հիմնական նախադասության հետ շարահյուսորեն չկապված միավորներ, իբրև միջանկյալներ ներկայացնում է նաև շրջադաս երկրորդականով մի քանի բարդ ստորադասական նախադասություններ: Օրինակ՝ «Նա կընդլայնե, **մտածում էի**, լուսավորության ասպարեզը: Եվ դա, **հույս ունիմ**, քեզ կթելադրե երևակայել» (էջ 444-447):

Գ. Գարեգինյանը «Ժամանակակից հայոց լեզու (բարդ նախադասություն)» (Եր., 1984) գրքում նույնպես տարբերակում է նախադասությանը քերականորեն չկապվող, բայց իմաստով կապված երկու տեսա-

⁵ Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, Հայոց լեզու-7 (դպրոցական դասագիրք), Եր., 2000, էջ 143-144:

⁶ **Ս. Աբրահամյան**, **Վ. Առաքելյան**, **Վ. Քոչյան**, Հայոց լեզու, II մաս, շարահյուսություն, էջ 438:

կի միավորներ՝ միջանկյալ և ներդրյալ, որոնցից առաջինին վերագրում է վերաբերմունքային, երկրորդին՝ իրազեկային արժեք: Այնուհետև «Միջանկյալ նախադասություններ» վերնագրի ներքո հիմնականում քննարկում է շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ: Ընդ որում՝ հեղինակը նկատում է, որ «կան որոշակի նշանակությամբ դիմավոր բայեր, որոնք միջադաս դիրքով ընկալվում են որպես սոսկ **միջանկյալ**, իսկ առաջադաս դիրքով՝ նաև որպես **գլխավոր**: Այդ բայերից են՝ *թվում է, կարծում եմ, վստահ եմ, համոզված եմ, ասում են, տես(եք), պատահում է, հասկանալի է, տեսնում եք, պարզվում է* և այլն»: Այս թվացյալ երկվությունը հիմնավորելու նպատակով հեղինակը, իմաստային ու քերականական կապից բացի, ներմուծում է «ձևական կապ» հասկացությունը՝ առանց սահմանելու դրա տարբերությունը քերականական կապից: Այսպես՝ հեղինակը գրում է, որ միջանկյալ նախադասությունները «ոչ թե քերականական, այլ իմաստային կապի մեջ են գտնվում նշված միավորների [ամբողջ նախադասության կամ նրա մի անդամի] հետ, քանի որ չեն ընկալվում ո՛չ որպես գլխավոր, ո՛չ որպես երկրորդական, ո՛չ էլ որպես անկախ համադաս նախադասություն: Արտաքնապես, սակայն, մանավանդ երբ նրանք կապվում են շաղկապներով, թվում է, թե քերականական կապ այնուամենայնիվ կա: Այս կապը, սակայն, սոսկ ձևական է» (էջ 366-367): Ինչպես տեսնում ենք, հակասությունները շատ են, և դրանք հաղթահարել չի հաջողվել: Դրա պատճառն այն է, որ ինչը չի տեղավորվել նախօրոք մշակված լեզվաբանական կադապարի (տեսության) մեջ, մի կերպ հարմարեցվել է դրան՝ փոխանակ կադապարը հարմարեցվել լեզվական իրողություններին և դառնար լիարժեք ու անհակասական:

Ա. Սարգսյանը «Ժամանակակից հայերենի կետադրությունը» (Եր., 2012) ձեռնարկում նույնպես տարբերակում է ներդրյալ և միջանկյալ նախադասությունները: Երկրորդները, ի տարբերություն առաջինների, «թեև ձևականորեն, սակայն քերականորեն կապվում են այն նախադասությանը, որի կազմում են», և տրոհվում են ստորակետերով կամ բուրժով (էջ 79-80): Հետո պարզվում է, որ, ի տարբերություն Գ. Գարեգինյանի, «ձևական կապ» արտահայտությունը վերաբերում է ոչ միայն քերականությանը (արտահայտության դիտվածքին), այլև իմաստին (բովանդակության դիտվածքին). «Քերականական այդ կապը իմաստային առումով հիմնականում ձևական է, սակայն արտահայտության պլանում շատ հստակ է»: Իբրև միջանկյալ նախադասություններ բերված օրինակների մի մասը՝ առաջադաս, մի այլ մասը շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ են: Օրինակ՝ **«Նկատի՛ ունեցեք**, որ դա արվում է ձեր օգտին»: **«Կարծում եմ՝** ապացույցները համոզիչ են»: **«Ապացույցները, կարծում եմ, համոզիչ են»** (նույն տեղում):

Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» (Եր., 1974) գրքում՝ վերաբերական բառերի ու բառախմբերի շար-

քում, թվարկել է նաև այնպիսի կառույցներ, որոնք հաճախ հանդես են գալիս որպես շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասության գլխավոր բաղադրիչ՝ *ճիշտ է (որ)*, *գարմաննալի է (որ)*, *հաճելի է (որ)*, *ցավալի է (որ)*, *ցանկալի է (որ)*, *կարող է պատահել որ*, *կասկածելի է (որ)*, *հասկանալի է (որ)*, *կհավատա՞ս (որ)*, *ներեցե՛ք (որ)*, *չմտածես (թե)*, *չկարծե՛ք (թե)*, *նշվում է (որ)*, *ասվում է (որ)*, *ասում են (թե)*, *հայտնի է (որ)* և այլն: Հեղինակը դրանք համարել է «անդամ նախադասության արժեք ունեցող միադամ ձևեր, որոնք **որ** կամ **թե** շաղկապներով ուղեկցվելու դեպքում ձևականորեն հանդես են գալիս որպես գլխավոր նախադասություններ, առանց դրանց՝ որպես միջանկյալ նախադասություններ» (էջ 379-387): Ասվածից տրամաբանորեն կարելի է բխեցնել, որ հիշյալ կառույցները շաղկապով ուղեկցվելիս միջադաս դիրքում նույնպես կարող են լինել գլխավոր նախադասություն (թեկուզ ձևակա-նորեն), սակայն հեղինակը այդ դեպքը չի ներկայացրել ու չի քննարկել:

Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի շարահյուսություն» (Երկեր, հ. 2, Եր., 1974) աշխատության «Միջանկյալ խոսքեր» վերնագրի ներքո գրել է. «Միջանկյալ ասվում են այն խոսքերը, որոնք մտնում են ուրիշ խոսքի մեջ՝ առանց քերականորեն կապակցվելու նրանց հետ»: Սակայն փակագծերի մեջ առնված ներդրյալ նախադասություններից և վերաբերա-կանի վերածված արտահայտություններից (*ո՛վ գիտե, հո՛ գիտե՞ք*) բացի՝ իբրև միջանկյալ խոսք է ներկայացրել նաև «գլխավոր խոսքը [գլխավոր նախադասությունը], երբ մտնում է երկրորդականի մեջ, օրի-նակ՝ *Նա վաղը, մյուս օրը, կարելի է, կգա*»: Բերել է նաև հետևյալ օրի-նակները. *Տիգրանը, ասում են, դեռ չի վերադարձել իր ճանապարհոր-դությունից: Այն ժամանակ, չէ՞ս հիշում, նա արդեն մեռել էր* (էջ 500-501): Ինչպես տեսնում ենք, շրջադաս երկրորդականով բարդ ստորա-դասական նախադասության գաղափարին ամենից ավելի մոտեցել է Մ. Աբեղյանը՝ թեև ինքն իրեն հակասելու գնով (գլխավոր ու երկրորդա-կան նախադասությունները, բնականաբար, չեն կարող քերականորեն միմյանց կապակցված չլինել, այսինքն՝ նշված նախադասություննե-րում իրականում չկա «միջանկյալ խոսք»): Մ. Աբեղյանը փաստորեն արձանագրել է, որ գլխավոր նախադասությունը կարող է միջադասվել երկրորդականին, սակայն փոխանակ այդ երևույթին համապատաս-խան բնորոշում և առանձին անուն տալու խցկել է «միջանկյալ խոսք» հասկացության մեջ:

Փաստորեն շարահյուսական շրջադասության երևույթը մինչ այժմ կա՛մ շրջանցվել՝ չի դիտարկվել, կա՛մ մեկնաբանվել է որպես այլ երևույթ⁷:

⁷ Հայտնի է, որ մասնագետները գիտական, առավել ևս ուսումնամեթոդական հետազոտություններ կատարելիս սովորաբար խուսափում են բնագրերում հանդիպող այն օրինակներից, որոնք հակասում են իրենց որդեգրած տեսությանը, հայեցակար-գին: Այդ պատճառով տեսադաշտից դուրս են մնում հատկապես այն երևույթները, որոնք համեմատաբար փոքր տարածում ունեն և ուսումնական տեսակետից հրատապ խնդիրներ չեն առաջացնում:

Այժմ փորձենք ցույց տալ վերոհիշյալ կառույցների սկզբունքային տարբերությունը միջանկյալ կառույցներից:

Միջանկյալ կառույցը սովորաբար սահմանվում է որպես նախադասության անդամների հետ քերականորեն չկապված բառ, կապակցություն կամ նախադասություն, որ արտահայտում է ասույթի նկատմամբ վերաբերմունք (*Ասածդ, **ինչ խոսք, օրենք է ինձ համար: Պապը լուռ ծխում է, տատը ցած է դրել շյուղերն ու, **չգիտես ինչու, ծնկներին է խփում: Սկզբում հուսահատված էինք, բայց շուտով մենք, **արի ու տես որ, գործը գլուխ բերեցինք*******): Ընդգծված կառույցները իրենց բնույթը չեն փոխում առաջադաս կամ վերջադաս լինելու դեպքում (***Ինչ խոսք, ասածդ օրենք է ինձ համար: Ասածդ օրենք է ինձ համար, **ինչ խոսք*****)⁸:

Ի տարբերություն սրանց՝ շրջադաս երկրորդականով վերոհիշյալ նախադասություններից յուրաքանչյուրում ընդգծված մասը միջանկյալ կառույց չի կարող համարվել հետևյալ պատճառներով:

Ա. Ընդգծված մասը քերականորեն կապվում է նախադասության մնացած մասի հետ, այդ պատճառով մեծ մասամբ կարելի է ավելացնել այդ կապը բառային միջոցով արտահայտող շաղկապ: Ավելին, այդպիսի նախադասությունները հաճախ հենց շաղկապով էլ հանդիպում են.

*Մենք բոլորս, տեսնո՞ւմ էք, **որ** ձեզ հետ այլևս չենք ուզում աշխատել: Իմ ընկերները, չգիտեմ, **թե** ովքեր են:*

*Այդ խնդիրը, ինձ համար միևնույնն է, **թե** ինչ լուծում կստանա:*

*Իսկ այդ մարդը, վստա՞հ ես, **որ** մեզ հետ անկեղծ է խոսում:*

*Այսօրվա հանրահավաքում, ինձ թվում է, **որ** շատ ժողովուրդ չի լինի:*

*Այս կեղտաբիծը, չե՞ս համոզվում, **որ** անհնար է օձառով վերացնել:*

*Իսկ փողկապդ, վիզդ միշտ լվա՞, **որ** հագնելիս շուտ չյուղոտվի:*

*Անձրևը տանում է մտքերս, չգիտեմ, **թե** ուր:*

Ի դեպ, հանդիպում են նաև այնպիսի օրինակներ, որոնցում զանազան պատճառներով շաղկապ հնարավոր չէ ավելացնել առանց շարադասական որոշ փոփոխության:

*Դեպի ո՞ւր, ինձ **ասա**, թոչում ես այդպես արագ: (Գ. Դ.)*

Ի՞նչ կա, չգիտեմ, իմ առջև պահված... (Հ. Թ.)

Ո՞վ է, տեսե՞ք, տանջվում մթնում... (Հ. Թ.)

Անշաղկապ օրինակներում քերականական կապը շատ ավելի ակնհայտ է դառնում, երբ ընդգծված մասը դարձնում ենք առաջադաս, ինչպես նաև ավելացնում շաղկապ. ***Թվում էր, (թե) ամեն ինչ լավ է: Տեսե՞ք, (թե) խոսքս ուր է գնում քաջ որսկանի գյուլլի պես: Արդեն հինգ տարի է, (ինչ) իմ ծննդավայրում չեմ եղել: Ինն ամսից ավելի է, (որ) արցախյան ճակատի մեր զինվորները խրամատներից դուրս չեն գալիս: Կարծում եմ, (որ) ընկերներս ինձ մենակ չեն թողնի: Մտածում էի, (որ)***

⁸ Վերաբերականի ածեքով միջանկյալ կառույցը, եթե եղանակավորում է ոչ թե ամբողջ նախադասությանը, այլ միայն մեկ անդամի, ապա սովորաբար իր դիրքը չի կարող փոխել:

այդ տիմարին դա էլ քիչ է: **Միանգամայն հնարավոր է**, (որ) որոշ հավանական մասնակիցներ շուկա մտնելուց հրաժարվեն պատժից վախենալու պատճառով: **Ղու գիտե՛ս**, (որ) երգերիս մեջ ինձ ոչ ոք չի ճանաչում: **Զգիտեմ**, (թե) դու ուր ես գնում... **Ղու տեսնում ես**, չէ՞, (թե) մեր սահմաններում ինչ է կատարվում: **Բնձ ասա՛**, (թե) դեպի ուր ես թռչում այդպես արագ: **Զգիտեմ**, (թե) ինչ կա իմ առջև պահված... **Տեսե՛ք**, (թե) ով է տանջվում մթնում...

Բ. Ընդգծված մասը մնացածի համեմատ արտահայտում է ոչ թե վերաբերմունք կամ գոնե լրացուցիչ տեղեկույթ, այլ քերականորեն (հաճախ էլ՝ հաղորդակցական առումով) նախադասության գլխավոր միտքը⁹: Հենց այդ պատճառով՝

Գ. Միջանկյալ համարվող մասը որոշ դեպքերում հնարավոր չէ նախադասությունից հանել, քանի որ մնացած մասը քերականորեն անավարտ և կամ իմաստով թերի է մնում: Օրինակ. *Որոշ հրավիրյալներ, միանգամայն հնարավոր է, հրաժարվեն ճաշկերույթին մասնակցելուց: Իմ ծննդավայրում, արդեն հինգ տարի է, չեմ եղել: Իմ ընկերները, չգիտեմ, թե ովքեր են:*

Դա նշանակում է, որ ընդգծվածը նախադասության անկապտելի մասն է, մասնավորապես գլխավոր բաղադրիչը:

Դ. Շրջադաս երկրորդականը և գլխավոր նախադասությունը ենթարկվում են ժամանակների համաձայնության կանոններին:

Մենք փաթաթվել էինք վերարկուների մեջ, բայց քամին, թվում էր, ուզում է մեզ թռցնել: Այս բարդ նախադասության համադաս բաղադրիչների ստորոգյալները անկատար անցյալով են (*փաթաթվել էինք, թվում էր*): Դրանցից երկրորդին ստորադասված նախադասության ստորոգյալը, ըստ ժամանակների համաձայնության կանոնի, ներկա ժամանակով է (*ուզում է*):

Մինչդեռ համանուն կամ արտաքուստ նմանատիպ վերաբերականները (միջանկյալ կառույցները) քարացած ժամանակաձևեր են և չեն ենթարկվում ժամանակների համաձայնության կանոններին: *Մենք փաթաթվել էինք վերարկուների մեջ, բայց քամին, թվում է, ուզում էր մեզ թռցնել:* Այստեղ երկրորդ համադաս նախադասության ստորոգյալն է *ուզում էր*, իսկ *թվում է* արտահայտությունը վերաբերական է, որ կարող է փոխարինվել *ասես, կարծես* հոմանիշներով: Նախորդ օրինակում նման փոխարինում հնարավոր չէ:

Ե. Շրջադաս երկրորդականին գերադաս նախադասությունը (որ համարվում է իբր միջանկյալ կառույց) առաջադաս դարձնելու դեպքում ակնհայտորեն ու անվիճելիորեն գլխավոր նախադասություն է.

⁹ Ընդհանրապես հաղորդակցական առումով գլխավոր տեղեկույթը կարող է արտահայտվել մերթ երկրորդական (ստորադաս) նախադասությամբ (Նա ասաց, որ **հիմնարկում կրճատումներ են լինելու**), մերթ գլխավորով (**Մարգիսը**, որ իմ դպրոցական ընկերն է, **այսօր նշանակվել է բնապահպանության նախարար**):

Ղու տեսնում ես, չէ՞, թե Ուկրաինայում ինչ է կատարվում: Մա մեկնաբանվում է՝ իբր դիրքից է կախված՝ քննարկվող կառույցը միջանկյալ միավոր է, թե՞ գլխավոր նախադասություն: Բայց քննարկվող կառույցը դիրքի այսպիսի փոփոխության դեպքում չի փոխում իր իմաստը, հետևաբար անտրամաբանական են դրան տարբեր գործառույթներ վերագրելը և տարբեր անուններ տալը: Մանավանդ որ իսկապես միջանկյալ կառույցները ևս, ինչպես տեսանք, չեն փոխում իրենց իմաստն ու գործառույթը դիրքի փոփոխության դեպքում:

Այսպիսով հիմնավորվում է մեր առաջադրած այն տեսակետը, որ վերոհիշյալ կառույցները երկրորդական նախադասությանը միջադասված գլխավոր նախադասություններ են, այսինքն՝ գործ ունենք շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասությունների հետ:

Այս հիմնավորումից հետո հարց է ծագում, թե ինչու նշված կառույցները համարվում են ոչ թե գերադաս, այլ միջանկյալ միավորներ: Որպես պատճառ կարելի է նշել հետևյալ հանգամանքները:

1. Կա կանխակալ կարծիք, թե ստորադաս միավորը չի կարող իր մեջ առնել գերադաս միավորը: Այս կարծիքը տեսաբաններին մղում է անտեսելու, շրջանցելու դրան հակասող փաստերը կամ ստիպում դրանց զարտուղի մեկնաբանություններ տալու¹⁰:

2. Շրջադաս երկրորդականով բարդ նախադասության գլխավոր բաղադրիչի միջադաս դիրքը, տրոհումը և մանավանդ շաղկապի գեղջումը նրան արտաքուստ շատ են նմանեցնում միջանկյալ կառույցի: Փաստորեն հաճախ շփոթվում ու նույնացվում են «միջադաս (դիրք)» և «միջանկյալ (կառույց)» հասկացությունները:

3. Նշված կառույցներն առավելապես բնորոշ են անկաշկանդ բանավոր խոսքին և քիչ են թափանցում գրավոր խոսք ու, որպես կանոն, անտեսվում են՝ իբրև լուսանցքային երևույթներ կամ օրինաչափություններից շեղումներ:

4. Նշված կառույցների մի մասը հակում ունի վերածվելու կամ արդեն վերածվել է համանուն հարադրավոր վերաբերականի (*ով գիտի, չգիտեմ ինչու, ինքդ ասա, ինչ անեմ, հո գիտե՛ս, ասացեք ինդրեմ, թվում է* և այլն), ու հաճախ դժվար է լինում դրանք տարբերակելը:

5. Դեպքերի սակավության հետևանքով տեսաբանները մինչ այժմ չեն նկարագրել շրջադաս դիրքը¹¹, իսկ գոյություն ունեցող տեսության

¹⁰ Մեջբերվող խոսքին միջադասված հեղինակային խոսքի դեպքում, ինչպես վերը նշվեց, առկա է շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասություն: Բայց այդ հանգամանքը սովորաբար լռության է մատնվում: Հազվադեպ բացառություններից տե՛ս **Յու. Ավետիսյան, Հ. Ջաքարյան, Ա. Աբրահամյան**, Ձեռնարկ-շտեմարան, Եր., 2009, էջ 234 (գրքի «Շարահյուսություն» բաժինը գրել է Ա. Աբրահամյանը): Այստեղ արձանագրված է կառույցի անշաղկապ բարդ ստորադասական լինելը, սակայն քննարկված չէ շարադասական յուրօրինակությունը:

¹¹ Բացառություն են տողերիս հեղինակի երկու հոդվածները. Տե՛ս **Հ. Ջաքարյան**, Շրջադաս երկրորդական նախադասությունները հայերենում, «Ժողովածու Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-

սահմաններում հարկ է լինում նշված կառույցները որևէ կերպ դասելու այլ երևույթների շարքին:

6. Հաստատված կարծրատիպերը (հատկապես ռուսական քերականությունից եկող) չեն նպաստում նորովի մոտեցմանն ու տեսության վերանայմանը:

Միայն համակարգային մոտեցումն է թույլ տալիս հայտնաբերելու տեսության մեջ բաց մնացած վանդակը և դա լրացնելու համապատասխան նյութով:

Ի դեպ, գլխավոր նախադասությանը շրջադասվում են հիմնականում ենթակա, ուղիղ խնդիր և հանգման խնդիր երկրորդականները:

Հարկ է նկատել, որ շրջադաս երկրորդականով բարդ նախադասությունները առաջ են բերում նաև կետադրության խնդիրներ: Հատկապես շաղկապի զեղչումը գործող կանոնների շրջանակում արտահայտել չի հաջողվում: Ուստի կա՛մ պետք է այս դեպքում հրաժարվել շաղկապի զեղչումը բուրով արտահայտելու պահանջից, կա՛մ ենթականոն սահմանել, որ շաղկապի զեղչման դեպքում գլխավոր նախադասությունը երկրորդականից կարող է նաև տրոհվել մի կողմից ստորակետով, մյուս կողմից՝ բուրով:

Ընկերներս, կարծում եմ՝ ինձ մենակ չեն թողնի:

3. Սակայն, ուրեմն բառերի խոսքիմասային տարաբովանդակության խնդիրը

Սակայն, ուրեմն բառերը հիմնական կիրառությամբ անվիճելիորեն շաղկապներ են՝ որպես ձևաբանական միավորներ, և սպասարկու բառեր՝ որպես շարահյուսական միավորներ: Մրանց հիմնական դիրքը կապակցված կառույցներից երկրորդի (նախադասության կամ դերբայական դարձվածի) սկզբում է: Երբեմն միայն կարող են միջադասվել երկրորդ կառույցին՝ մեծ մասամբ տրոհվելով (*Մարդկային կյանքի համար 50 տարին երկար ժամանակ է, պատմության համար, սակայն, դա ընդամենը ակնթարթ է: Մեծարեցինք նրան որպես երգչի՝ չմոռանալով, սակայն, նրա գիտական վաստակը*): Եվ քանի որ այս դեպքում շաղկապներն արտաքուստ (ձևականորեն) նմանվում են միջանկյալ միավորների, այդ պատճառով էլ որոշ հեղինակների կողմից նույնացվում են դրանց, այսինքն՝ մեկնաբանվում են որպես վերաբերական (ձևաբանորեն) և միջանկյալ միավոր (շարահյուսորեն)¹²: Դրան նպաստում է այն, որ այդ շաղկապները հաճախ կապակցում են ինքնուրույն նախադասություններ, պարբերություններ, ծավալուն ասույթներ, իսկ **ուրեմն**-ը երբեմն էլ գործածվում է որպես խոսքի սկզբի կամ վերսկսման

ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի (2012 թ., դեկտեմբերի 14)», 2-րդ պրակ, Եր., 2014, էջ 36-40, **նույնի** Շրջադաս ստորադասական կառույցները հայերենում, «Ձահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ (2014 թ., հունիսի 10-12), Եր., 2014, էջ 43-50:

¹² Ուրիշ շաղկապներ էլ երբեմն կարող են միջադաս լինել (որ, թե, եթե, քանի որ ևն), սակայն դրանց վերաբերականի արժեք չի վերագրվում, քանի որ չեն տրոհվում:

ազդանշան՝ գնահատվելով որպես թարմատար կամ մակաբույծ բառ:

Սակայն շաղկապի դեպքում այսօրինակ գնահատմանը նպաստող հանգամանք է և այն, որ դրա մի շարք կիրառություններում զիջական որոշ իմաստ կա («այնուամենայնիվ, բայց և այնպես»), ինչն արձանագրված է որոշ բառարաններում¹³: Թերևս այդ պատճառով է, որ **սակայն**-ին վերագրվում է նաև զիջական վերաբերականի դեր:

Ինդիքն այն է, թե այս շաղկապները միջադաս դիրքում շարունակում են մնալ շաղկապնե՞ր՝ վերաբերականի լրացուցիչ երանգով, թե՞ վերածվում են լիարժեք վերաբերականի՝ ձևաբանորեն, և միջանկյալ միավորի՝ շարահյուսորեն: Եթե առաջին դեպքն է ճիշտ, ապա այդ շաղկապները չի կարելի կոչել **միջանկյալ բառեր**, քանի որ վերջիններս քերականորեն կապված չեն նախադասությանը, մինչդեռ շաղկապները ինքնին քերականական կապի ապահովման միջոց են և սկզբունքորեն տարբեր են միջանկյալ միավորներից: Ավելին, թերևս տեղին չէ այդ շաղկապների՝ միջադաս դիրքում տրոհելը, որն էլ գուցե թյուրըմբռնման պատճառներից է:

Եթե երկրորդ դեպքն է ճիշտ, այսինքն՝ միջադաս դիրքում այդ բառերը վերաբերականներ են, ապա պետք է խոսել խոսքիմասային համանունության (տարարժեքության) մասին և ապացուցել, որ միջադաս **սակայն** և **ուրեմն** բառերը կապակցական (շաղկապական) նշանակություն չունեն: Բայց դա անհնար է, դրա համար չկան բավարար հիմքեր: Նկատենք, որ միջադաս **սակայն**-ը և **ուրեմն**-ը առանց իմաստի փոփոխության կարող են փոխել իրենց դիրքը և դառնալ առաջադաս կամ վերջադաս, հետևաբար նույնարժեք են ցանկացած դիրքում: Նույնիսկ խոսքի սկզբում գործածվող **ուրեմն** մակաբույծ բառը, կարելի է պնդել, որ կապակցման երանգ է ակնարկում. նշում է տվյալ խոսքի կապը համանման այլ խոսքերի հետ, կապը՝ տվյալ խոսքի և դրա անհրաժեշտությունը առաջ բերած իրավիճակի միջև և այլն: Դրանով իսկ այդ **ուրեմն**-ը դառնում է խոսքի յուրատեսակ ներածական և «բուֆերային» բառ, խոսքի սկզբի դժվարությունը մեղմող, «փափուկ» սկիզբ ապահովող և ուշադրություն հրավիրող թարմատար արտահայտություն:

ձեռնաբար կարելի է պնդել, որ **սակայն** և **ուրեմն** բառերը բոլոր դեպքերում շաղկապ են, իսկ որոշ դեպքերում կարելի է դրանցում տեսնել ընդամենը վերաբերականի հավելյալ երանգ: Բայց դա չի կարելի չափազանցել մինչև խոսքիմասային երկարժեքություն տեսնելը, միջադաս և վերջադաս կիրառությամբ դրանք լիարժեք վերաբերական հռչակելը, ինչը համարում ենք թյուրըմբռնում: Այլ կերպ ասած՝ **սակայն**-ի և **ուրեմն**-ի առնչությամբ «շաղկապ / վերաբերական» տարբերակումը շինծու է՝ հիմնված միջանկյալ բառերին բնորոշ կետադրության վրա:

Այս թյուրըմբռնման առաջացմանը նպաստել է ևս մի հանգամանք:

¹³ Տե՛ս, օրինակ, **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976; Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., 1969-1980:

Կարծում ենք՝ շատ բան սկսվել է նրանից, որ *սակային*-ը հոմանիշ է ոչ միայն *բայց*-ին, *բայց և այնպես*-ին և ռուսերեն *но*-ին, որոնց միայն շաղկապ լինելը չի վիճարկվում, այլև ռուսերեն *однако*-ին, որը համարվում է թե՛ շաղկապ, թե՛ վերաբերական (տե՛ս Викисловарь): Վերջինս նշանակում է ոչ միայն «բայց» (շաղկապ), այլև «այնուամենայնիվ, այնուհանդերձ, միննույնն է»՝ այս երկրորդ՝ զիջական նշանակությամբ գնահատվելով որպես վերաբերական: Մա թերևս նույն թյուրըմբռնումն է, որ կրկնվել է *սակային*-ի դեպքում, քանի որ հիմք չկա ենթադրելու *однако* շաղկապի և *однако* վերաբերականի համանունություն: Ուստի հավանական է, որ գործ ունենք ռուսերենագիտության ազդեցության հետ:

Ուրեմն-ի կապակցությամբ էլ պիտի նկատել, որ ռուսերենի հետևանքի շաղկապները (օրինակ՝ *следовательно, значит, стало быть, и так и так*) երբ միջադաս դիրքում են լինում, համարվում են միջանկյալ միավոր (*вводное слово*)¹⁴:

Հայերենագիտական գրականության մեջ պատկերը հետևյալն է:

Հայերեն բացատրական և այլ հայտնի բառարաններում *սակային*-ը տրված է միայն որպես շաղկապ, ինչպես *բայց*-ը¹⁵: Միայն Չ. Աղաջանյանն է ներկայացրել երկու նշանակությամբ՝ որպես շաղկապ և վերաբերական¹⁶:

Ուրեմն-ը, ըստ Ս. Մալխասյանցի, վերաբերականի արժեք չունի: Ըստ Է. Աղայանի՝ շաղկապ է, սակայն կարող է լրացուցիչ ունենալ վերաբերականի «դե, այդ դեպքում, որ այդպես է», «վերջապես, վերջիվերջո» նշանակությունները: Ըստ «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ շաղկապ է, սակայն կարող է, որպես միջանկյալ բառ, լրացուցիչ ունենալ «հապա, ապա» նշանակությունը: Ըստ Ա. Սուքիասյանի՝ եղանակավորող բառ է (*հետևապես, հետևաբար, ուստի, ապա* բառերի նման): Ըստ «Հայ-ռուսերեն բառարանի» և «Հայերեն-անգլերեն բառարանի»՝ շաղկապ է: Ըստ Չ. Աղաջանյանի՝ երկարժեք է՝ շաղկապ և վերաբերական:

Ս. Աբրահամյանը «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» գրքում (Եր., 1959) նշել է, որ միջադաս կիրառության դեպքում *սակային* շաղկապի դերը «որոշ չափով մոտ է լինում եղանակավորող բառի դերին» (էջ 194): Բերված օրինակներից են. «Երգում ենք սեր, երգում ենք մահ, Երգում պայքար ու աշխատանք, Մեր երգերում, **սա-**

¹⁴ Ռուսերենագիտության մեջ *вводное слово* ասելով՝ հասկանում են միջանկյալ բառ, որը կարող է ունենալ նաև եղանակավորող նշանակություն, այսինքն՝ համարժեք լինել հայերենի վերաբերականին (տե՛ս Википедия):

¹⁵ Տե՛ս Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944-1945; Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան; Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան; Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967; Հայ-ռուսերեն բառարան, Եր., 1987; Ն. Բարաթյան և այլք, Հայերեն-անգլերեն բառարան, Եր., 2006)

¹⁶ Չ. Աղաջանյան, Արդի հայերենի իմաստաարժեքային զուգաձևությունների բառարանականական բառարան, Եր., 2017:

կայն, չկա Այսօր ո՛չ սեր, ո՛չ խոհ, ո՛չ կյանք» (Ե. Չ.): «Թագավորի դեմքի վրա փայլեց գոհունակության մի ժպիտ, որը, **սակայն**, զարմանք պատճառեց վիրաբույժին» (էջ 194-195): **Ուրեմն**-ի մասին նման վերապահում չկա:

Գ. Գարեգինյանը «Շաղկապները ժամանակակից հայերենում» գրքում (Եր., 1963) **սակայն** շաղկապի միջադաս և վերջադաս գործածությունների մասին գրել է. «Հիմնականում օգտագործվելով կապակցվող մասի սկզբում՝ այս շաղկապը կարող է, առանց իմաստային որևէ լուրջ փոփոխություն առաջացնելու, հանդես գալ նաև նախադասության տարբեր անդամներից առաջ (մեծ մասամբ ստորոցյալի) և նույնիսկ նախադասության վերջում: Շարադասական այս հատկանիշով այս շաղկապը մոտենում է եղանակավորող բառերին: Միջանկյալ բառի գործածություն ունեցող այս շաղկապի կետադրությունը դեռ կանոնարկված չէ» (էջ 153):

Նույն գրքում **ուրեմն** շաղկապի մասին գրված է. «Կապակցվող նախադասության մեջ հանդես գալով միջադաս կամ ետադաս գործածությամբ՝ այս բառը իր դերով մոտենում է կապակցական դեր կատարող եղանակավորող բառերին: Հաճախ նախորդ կամ հաջորդ մասից բաժանվում է ստորակետով» (էջ 268): «Որոշ դեպքերում այս շաղկապի հետևության նշանակությունն այնքան է աղոտանում, որ նա հանդես է գալիս միայն տարբեր ասույթների միջև ձևական կապեր նշելու դերով: Հատկապես ուշադրության արժանի են այն դեպքերը, երբ նա ընդհատված խոսակցությունների կամ մտքերի կապակցմանն է ծառայում: Հետաքրքիր են այս շաղկապի կիրառությունները թարմատարի նշանակությամբ, երբ նրա տեղի կամ անտեղի գործածություններով պատմողը ի մի է հավաքում իր մտքերը, ամփոփում ասելիքը և ժամանակ շահում նոր միտք զարգացնելու համար» (էջ 267):

Ա. Պապոյանը և Խ. Բաղիկյանը «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» ուսումնական ձեռնարկում (Եր., 2003) գրել են. «Միջանկյալ բառեր կարող են դառնալ նաև որոշ շաղկապներ (*թեկուզ, սակայն, էլ, ուրեմն, այսպ...*)» (էջ 199)՝ նկատի ունենալով դրանց գործածությունը վերաբերականի արժեքով: Սակայն այս պնդումը հիմնավորող որևէ օրինակ չեն բերել:

Գրեթե նույնը տեսնում ենք Ս. Աբրահամյան և այլք, «Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, շարահյուսություն» գրքում (Եր., 1976), որտեղ ևս **սակայն**, **ուրեմն** շաղկապների մասին ասված է, որ դրանք կարող են հանդես գալ որպես միջանկյալ բառեր, և որևէ օրինակ բերված չէ (էջ 295):

Մ. Ասատրյանը «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» գրքի Գ հատորում (Եր., 1977) **բայց, սակայն** հոմանիշ շաղկապների մասին գրել է. «Դրանց մեջ նկատվում է նաև զուտ կիրառության ձևի տարբերություն, որն արտահայտվում է նրանում, որ **սակայն** շաղկապը

դրվում է ոչ միայն կապակցվող նախադասության սկզբում, այլև կարող է միջադաս կիրառություն ևս ունենալ, անջատվել նախադասության մյուս անդամներից դադարով՝ այսպիսով շփման եզրեր հանդես բերելով եղանակավորող բառերի հետ» (էջ 280): Բերված են հետևյալ օրինակները. «Այս մտածմունքը, *սակայն*, փոփոխություն չառաջացրեց երիտասարդի որոշման վրա»: «Վշտերն ու տանջանքները, *սակայն*, անկարող էին ընկճել նրա աննկուն ու հպարտ հոգին» (էջ 281): **Ուրեմն** շաղկապի միջանկյալ կիրառության մասին այս գրքում ոչինչ չկա:

Մ. Ասատրյանը «Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն» գրքում (Եր., 1983) գրել է, որ վերաբերականները «կապակցական դեր չեն կատարում» (էջ 439): Դա նշանակում է, որ ըստ հեղինակի՝ շաղկապները չեն կարող միաժամանակ վերաբերական լինել: Եվ իրոք, նա ճիշտ չի համարում **ուրեմն** և այլ շաղկապների՝ վերաբերականի նշանակություն վերագրելը (տե՛ս էջ 444): Նույն հեղինակը «Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն» գրքում (Եր., 1987) գրել է, որ նախադասության որևէ անդամի եղանակավորող վերաբերականները միջանկյալ բառեր չեն, այլ նախադասության անդամներ են (էջ 321-324), իսկ իր նախորդ՝ ձևաբանության գրքում վերապահում է արել ամբողջ նախադասությանը եղանակավորող վերաբերականների համար դրանք համարելով միջանկյալ բառեր (տե՛ս էջ 441):

Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, «Ձևաբանություն» գրքում (Եր., 2015) գրված է. «Երբեմն **սակայն**, **ուրեմն** շաղկապները վերաբերականի նշանակություն են ստանում, երբ լինում են միջադաս դիրքում և ստորակետերով տրոհվում են որպես միջանկյալ բառ. *Բոլորին հրավիրատուն էր ուղարկվել, խնամիններից ոչ ոք, սակայն, հրավերքին չմասնակցեց: Մեր գերազանցիկներն, ուրեմն, կմասնակցեն այդ մրցույթին*» (էջ 178): «Վերաբերականի արժեքով կարող են հանդես գալ **սակայն**, **ուրեմն** շաղկապները, երբ միջադաս դիրքում են (*Ինձնից, սակայն, ավելին էին սպասում: Դե, ուրեմն, կգաս ինձ հետ*)» (էջ 183): «Տրոհվող վերաբերականի արժեք են ձեռք բերում **սակայն**, **ուրեմն** շաղկապները միջանկյալ կիրառությամբ» (էջ 186): Նույն գրքում **սակայն**-ը տրված է ոչ միայն համադասական շաղկապների, այլև զիջական վերաբերականների ցուցակում (տե՛ս էջ 182): Ըստ նույն գրքի՝ **սակայն**-ը վերջադաս դիրքում վերաբերականի արժեք չունի և չի տրոհվում. «*Փնտրել եմ նրան, չեմ գտել սակայն*» (էջ 168): «*Կե՛ր, թող ոչ ոք չիմանա սակայն*» (էջ 292):

Յու. Ավետիսյան և այլք, «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» բուհական դասագրքում (Եր., 2016) գրված է. «Երբեմն **սակայն** շաղկապը վերաբերականի նշանակություն է ստանում, երբ լինում է միջադաս դիրքում և ստորակետերով տրոհվում է որպես միջանկյալ բառ (էջ 137):

Ինչպես տեսնում ենք, Մ. Աբրահամյանի մի թեթև ակնարկը՝ **սակայն** շաղկապի՝ միջադաս տրոհվող կիրառության դեպքում վերաբե-

րականի երանգ ստանալու վերաբերյալ, այլ հեղինակների կողմից գնալով ուռճացվել է մինչև ոչ միայն **սակայն**, այլև **ուրեմն** բառերի խոսքիմասային տարարժեքության մասին պնդումները:

Եզրակացություն

1. Լեզվական գծային միավորների դիրքային երեք բնութագրերին՝ առաջադաս, միջադաս, վերջադաս, պետք է հավելել չորրորդը՝ շրջադաս դիրքը, որը հոդվածում քննարկվում է շարահյուսական մակարդակում:

2. Որպես միջանկյան միավոր դիտարկվող այն ստորոգական կառույցները, որոնք առաջադաս դիրքում և մանավանդ ստորադասական շաղկապի առկայությամբ գերադաս նախադասություն են, նույն գործառույթ ունեն ցանկացած դիրքում՝ անկախ շաղկապի առկայությունից:

Շարահյուսական կառույցի շարադասական փոփոխությունը, նույն իմաստի պահպանմամբ հանդերձ, կարող է հանգեցնել նույն երևույթի տարատեսակների (կապ / շաղկապ, նախադիր / հետադիր են) կամ դիրքային տարբերակների (առաջադաս, միջադաս, վերջադաս, նախադաս, հետադաս), բայց ոչ՝ տարաբնույթ երևույթների (միջանկյալ կառույց / գլխավոր նախադասություն) առաջացման: Սա վերաբերում է նաև հաջորդ կետին:

3. **Սակայն, ուրեմն** բառերը բոլոր դիրքերում շաղկապներ են: Միայն երբեմն, հատկապես միջադաս դիրքում կարող են հավելյալ ձեռք բերել վերաբերականի երանգ: Բայց դա բավարար չէ պնդելու, թե այդ դեպքում առկա է խոսքիմասային տարարժեքություն:

Կարող ենք պնդել, որ խոսքիմասային տարարժեքության որոշման համար տարբերակիչ հատկանիշ են իմաստը (խոսքիմասային նշանակությունը) և գործառույթը, բայց ոչ շարահյուսական դիրքը (շարադասությունը) և կետադրությունը: Խնդիրն այն է, որ շարադասությունը կամընտրական է և ընդամենը ոճական նրբերանգում է առաջ բերում, իսկ կետադրությունը պայմանական է, կամայական և ընդամենը օժանդակ դեր ունի գրավոր խոսքի ճիշտ ընկալման առումով:

ОГАНЕС ЗАКАРЯН – О некоторых спорных проблемах синтаксиса армянского языка. – Эта статья посвящена следующим трем вопросам.

1. Лингвистические линейные единицы по своему положению (позиции) имеют не три характеристики: *препозитивное*, *интерпозитивное* и *постпозитивное*, а четыре. Четвертое – *перипозитивное* положение, когда характеризующая единица окружает другую единицу.

2. Рассматриваемые как вводные единицы те интерпозитивные конструкции, которые являются главными предложениями в препозитивном положении, на самом деле имеют это же значение и выполняют ту же функцию в любом положении.

В армянском языке существуют сложноподчиненные предложения, придаточное предложение которых по отношению к главному предложению занимают не только препозитивное, интерпозитивное или постпозитивное, но и перипози-

тивное положение: **Ընկերներս, կարծում եմ, (որ) ինձ մենակ չեն թողնի: Իմ ծննդավայրում, արդեն հինգ տարի է, (ինչ) չեմ եղել.** Последние, однако, в лингвистической литературе до сих пор либо не обсуждались, либо считались простыми предложениями, содержащими вводное предложение. Т. е. главное предложение, из-за своего интерпозитивного положения по отношению к придаточному, считалось синтаксической единицей, находящейся вне пределах грамматической конструкции предложения.

В армянском языке существуют также перипозитивные причастные обороты: **Միայնակ ես սիրում եմ նստել երեքուն լույսերում:**

3. Союзы **սակայն, ուրևան**, приобретающие модальный оттенок в интерпозитивном или постпозитивном положении, не теряют своей роли союза и не приобретают частеречную омонимию.

Ключевые слова: *относительное положение, препозитивное, интерпозитивное, постпозитивное, перипозитивное (положение), главное предложение, вводная единица, модальное слово, союз, частеречная омонимия*

HOVHANNES ZAKARYAN – On Some Controversial Problems of the Syntax of the Armenian Language. – This article is about the following three issues.

1. Linguistic linear units, according to their position, do not have three characteristics: *prepositive, interpositive, and postpositive*, but four. The fourth is the *peripositive* position when the characterized unit surrounds another unit.

2. Considered parenthetical (inserted) units are those interpositive constructions, which are main clauses in the prepositive position, actually have the same meaning and perform the same function in any position.

In Armenian, there are such complex sentences, in which the subordinate clause occupies not only prepositive, interpositive and postpositive positions in relation to the main clause, but it can also happen in the peripositive position: **Ընկերներս, կարծում եմ, (որ) ինձ մենակ չեն թողնի: Իմ ծննդավայրում, արդեն հինգ տարի է, (ինչ) չեմ եղել.** The latter, however, either have not been discussed till nowadays in linguistic literature or have been considered simple sentences with parenthetical clauses. It means that the principal clause, being in an interpositive position compared to the subordinate clause, has been considered to be such a syntactic unit that remains outside the limits of the sentence's grammatical structure.

In Armenian there are also peripositive participial phrases: **Միայնակ ես սիրում եմ նստել երեքուն լույսերում:**

3. The conjunctions **սակայն, ուրևան**, acquiring a modal connotation in an interpositive or postpositive position, do not lose their role as conjunction and do not acquire part-of-speech homonymy.

Key words: *relative position, prepositive, interpositive, postpositive, peripositive (position), principal clause, parenthetical unit, modal word, conjunction, part-of-speech homonymy*